

<p>Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)</p>	<p align="center"><b>ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄԱՑԻԱՅԻ ՄԵԹՈԴՆԵՐ (7.20ՇԱՏ004)</b></p>
<p>ECTS կրեդիտ</p>	<p>4 կրեդիտ</p>
<p>Դասընթացի պատասխանատու դասախոս</p>	<p>Ղուլյան Ա.Բ, տ.գ.թ., դոցենտ</p>
<p>Ուսումնառության վերջնարդյունքներ</p>	<p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p align="center"><i>(գիտելիք և իմացություն)</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• ներկայացնել շինարարական նորագույն տեխնոլոգիաների հիմնական ուղղությունները,</li> <li>• ցուցաբերել ընդհանուր գիտելիքներ նոր շինարարական մեքենաների, մեխանիզմների, գործիքների կառուցվածքի և տեխնիկական բնութագրերի վերաբերյալ,</li> <li>• ընդհանուր գծերով պարզաբանել շինարարության և նախագծման մեքենայացման և ավտոմատացման եղանակների զարգացման ուղղությունները,</li> </ul> <p align="center"><i>(կարողություններ)</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• մշակել շինարարական նորագույն տեխնոլոգիաների տեխնոլոգիական քարտերի կազմն ու բովանդակությունը,</li> <li>• մանրամասնորեն հաշվարկել դիտարկվող նորագույն տեխնոլոգիաների նյութական և աշխատանքային ռեսուրսների ծախսը,</li> <li>• ճշգրիտ որոշել դիտարկվող նորագույն տեխնոլոգիաներով իրականացվող աշխատանքների տևողությունները,</li> <li>• կիրառել ստացված գիտելիքները նորագույն տեխնոլոգիաների քարտերի նախագծման ժամանակ:</li> </ul>
<p>Դասընթացի թեմատիկ ծրագիր</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ներածություն: Շինարարությունում տեխնոլոգիական առաջընթացի հիմնական ուղղությունները: Նորագույն շինարարական գործընթացների նորմավորման եղանակները: Աշխատանքների և գործընթացների տեխնոլոգիական քարտերի բովանդակությունը:</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• Բնահողի մշակման նորագույն տեխնոլոգիաներ: Հողափոր, փոխադրող, խտացնող տեխնիկական միջոցների զարգացման ուղղություններ: Շարվածքի նորագույն տեխնոլոգիաներ: Ջերմամեկուսիչ բլոկներից շարվածքի իրականացման տեխնոլոգիա:</li> <li>• Միաձույլ բետոնե և երկաթբետոնե աշխատանքներում կիրառվող նորագույն տեխնոլոգիաներ: Կաղապարամածային մոդուլային համակարգերը ժամանակակից շինարարությունում: Ամրանային աշխատանքների կատարման նորագույն տեխնոլոգիաներ:</li> <li>• Նորագույն տեխնոլոգիաները շինարարական կոնստրուկցիաների մոնտաժման բնագավառում: Գերհզոր և մինի շինարարական տեխնիկայի և ռոբոտների կիրառումը:</li> <li>• Պաշտպանիչ ծածկույթների իրականացման ժամանակակից տեխնոլոգիաներ: Ջրամեկուսացման և ջերմամեկուսացման նորագույն տեխնոլոգիաներ:</li> <li>• Տանիքային ծածկույթների իրականացման ժամանակակից տեխնոլոգիաներ: Ծեփագործական և ներկարարական աշխատանքների ժամանակակից տեխնոլոգիաներ:</li> <li>• Երեսպատման աշխատանքների ժամանակակից տեխնոլոգիաներ: Կոմպոզիտային սալերով պատերի և տանիքների երեսպատում: Կախովի ճակատների իրականացումը:</li> <li>• Լցնովի հատակների իրականացման տեխնոլոգիաներ: Ջեռուցվող հատակների իրականացման տեսակները:</li> </ul>
Դասընթացի գրականության ցանկ	<ul style="list-style-type: none"> <li>• Գրիգորյան Վ.Ի., Ղուլյան Ա.Բ., Բաղայան Վ.Ս. և ուրիշներ «Շինարարական արտադրության տեխնոլոգիա, I մաս», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2005թ., 285 էջ:</li> <li>• Գրիգորյան Վ.Ի., Ղուլյան Ա.Բ., Բաղայան Վ.Ս. և ուրիշներ «Շինարարական արտադրության տեխնոլոգիա, II մաս», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2006թ., 239 էջ:</li> <li>• Գրիգորյան Վ.Ի., Ղուլյան Ա.Բ. և ուրիշներ «Շինարարության արտադրության կազմակերպումը բնականոն և արտակարգ իրավիճակներում», Երևան, 2009թ., 215 էջ:</li> </ul>

	<ul style="list-style-type: none"><li>• Սարուխանյան Հ.Ս. «Շինարարության կազմակերպում, պլանավորում և կառավարում», մեթոդական ցուցումներ, Երևան, 1988թ, 73 էջ:</li><li>• Վասիլևա Ա.Ի., Ենոքյան Կ.Բ., Գալստյան Գ.Շ., Գրիգորյան Վ.Վ. «Շինարարական աշխատանքների ծավալների հաշվարկ», մեթոդական ցուցումներ, Երևան, 2011թ., 31 էջ:</li><li>• Горячкин П.В. “Нормы и расценки на новые технологии в строительстве”, - М., 2004г. - 432с.</li></ul>
--	--